

Հարկան զինը 10 րուրի, կէս տարւանը 6 րուր.
Առանձին համարները 7 կողէկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և օրն օրից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւանիւր բառին 2 կողէկ.
Տ է Լ Է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԿԵՍ ՏԱՐՎԱՅ ԲԱՑՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կէս տարւայ գինն է 6 ր.

«ՄՇԱԿ» տարեկան զինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուրի, տասն և մէկ և տասն ամսանը՝ 9 ր., ինն և ութ ամսանը՝ 8 ր., եօթ ամսանը՝ 7 ր., վեց ամսանը՝ 6 ր., հինգ ամսանը՝ 5 ր., չորս ամսանը՝ 4 ր., երեք ամսանը՝ 3 ր., երկու ամսանը՝ 2 ր., ամսական 1 րուրի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ Օտարաբարձրացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлис. Редакция «МШАКЪ»: Խալ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչն է թիւրքիայի թիւ տալիս. Ամբողջ հասկանալի չենք. Հայոց հարցը և եւրոպական մասնաւոր. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր ասմանի միւս կողմից. Պետական կարեւորների միջոցառումները և յարաբերակցւածը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ թիւրքիայից. Նամակ թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ. Թիւրքիայի վիճակը:

ԻՆՉՆ Է ԹԻՐԻԲԻԱՅԻՆ ԹԵՒ ՏԱԼԻՍ

Երբ մի քանի ամիս արանից առաջ եւրոպական երեք պետութիւնները միմեկին միահամուռ ոյժով հետադուրսութիւն կատարելու փոքր լարիւնքով՝ ամենին ուրախացան, տեսնելով եւրոպական կոնցերտի մէջ ներդաշնակութիւն:

Երբ այդ պետութիւնները հետագայում թիւններ անելուց յետոյ համադրեցին, որ Սատանի կողմից իր սարսափելի մահաբանութիւններով ձշմարիտ է, որ փոքր լարիւնքով ապրող քրիստոնէայ ազգայնականութեան վիճակը անկարգութիւն վատ և թշուառ է, ամենքը հաւատացած էին,

ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ

ԹԻՐԻԲԻԱՅԻՆ ԴԻՃԱԿԸ

Թիւրքիայի ներքին վիճակը, հեռուից նայողի համար, յաճախ խիստ տարօրինակ է երևում, բայց այնու ամենայնիւ բացատրելի է իբրև պատմական պայմանների հետևանք, որի համար այժմեան ղեկավարներին չէ կարելի պատասխանատու համարել: Սրանց մի բանում միայն կարելի է պարտաւել, որ չեն ուզում բանալ բացարձակապէս իրանց աչքերը, չեն էլ կամենում պետութեան անդամների դիրքը հասկանալ, որ նրան ժամանակակից ոգով վերանորոգել և ամբարձրելու: Ուրեմն թիւրքիայի քաղաքագէտները, երևում է կարգաւոր են: Յուսով թէ առանց արտաքին ուժի ճնշման կարելի է իրօք վերանորոգել մտքները՝ Կ. Պոլսում տիրող ընդհանուր կարգութեան և ազգայնականութեան պատճառով բարձրովին զուր է: Հիւանդ մարդը՝ բացարձակապէս չէ ուզում ընդունել այն դուր ղեղը, որ կարող էր նրան բուժել:

Իրանց յարձակողական պատերազմներն անկողաց յետոյ թիւրքերը ոչ թէ ընաղդումից, այլ

որ հայերի արդար դատը պաշտպանութիւն է դառնալ և բաւարար կերպով կը լուծվի: Խալ երբ պետութիւնները չը պատկերով պաշտօնական յանձնաժողովի ղեկուցարան, մշակեցին բարենորոգութիւնների մի ծրագիր և յանձնեցին թիւրքիայի կառավարութեան մարդկութեան բոլոր բարեկամները հիացան, տեսնելով եւրոպան իր կոչման բարձրութեան վրա, և այլ ևս կասկած չը մնաց, որ այս անգամ կաջողի իրագործել այն խոստումը, որ տուել էր եւրոպան արանից 18 տարի առաջ:

Սակայն այդ ընդհանուր հիացման միջոցին թիւրքիան ոչ միայն չէր ընկճվում, այլ և ամեն օր նոր ապացոյցներ էր տալիս, որ նա ոչ մի զին չէ տալիս եւրոպական համախմբման, եւրոպական միացեալ պաշտպանութիւն:

Թիւրքիան շատ լաւ էր ուսումնասիրել լուսաւորեալ եւրոպայի թոյլ կողմերը, նա լաւ գիտէր, որ եւրոպացիների մէջ տարածւած թիւնների համար տախիթներ շատ կան, նա չէր հաւատում, որ եւրոպական պետութիւնները անփոփոխ կերպով երկար ժամանակ տոկուն և յամուռ կերպով շարունակեն իրանց պաշտպանութիւնը: Թիւրքիան միշտ օգտվել էր ուրիշների սխալներից, խոյս էր տուել պարտաւորութիւններից: Այս անգամ էլ նա յոյս էր դրել իր վաղեմի ծարպիկութեան և հնարագիտութեան վրա և այդ պատճառով իր մարզերը ծաղրում էր պետութիւնների միահամուռ ձրնաւորութիւնը: Եւ ինչպէս թիւրքիան յետաձգում էր:

Եւրոպայում տեսնում էին թիւրքիայի զանազանութիւնը, յանդուգն և անպատկառ կերպով կամակործանելը, նրա ղեկավար չարահիւսաց խաղը պետութիւնների հետ և սարսափով մտածում էին, — մի թէ թիւրքիան այս անգամ էլ կը խաբէր եւրոպային, չէր ընկճվի, չէր կատարել պետութիւնների պաշտպանութիւնը:

Եւ թիւրքիան արդէն բաւական աջողութիւն ունեցաւ շուրջիւ եւրոպական միջազգային յարաբերութիւնների խախտում և անկանոն պայմանների: Թիւրքիան հանդիսաւ կերպով յետ է դրել ընթացիկ ծրագրերը և ծիծաղում է եւրոպայի խոյստառականութեան վրա:

Հանդամանքների բերմունքից ստիպված՝ նստակեաց ժողովուրդ եղան: Չեղք էին բերել մի հազար պետութիւն, որի հիւքն էր իսլամը, և որը հիմա կառավարում են և արտաքին ու ներքին վտանգներից պաշտպանում: Սակայն մի այդպիսի պաշտօնի համար լոկ կոպիտ ոյժը բաւական չէր, ամենից առաջ հարկուոր էր վարչական ընդունակութիւն, որը թիւրքերը երբեք չեն ունեցել և այժմ էլ չունեն:

Եթէ արաբների նման իրանը էլ դիտութիւնը, բանաստեղծութիւնը և զեղարուեստները սիրող եղած լինէին՝ շատ հաւանական է, որ պատմութեան ընթացքը «երկիր կառավարելու արուեստը» էլ նրանց կը սովորեցնէր: Սակայն թիւրքերը նստակեաց լինելով հանդերձ չը իտիւղեցան, այլ իրանց հին լաւ և վատ յատկութիւնները պահեցին, և միշտ ամեն քաղաքակրթութեան և ամեն յառաջդիմութեան թշնամի մտացին: Մի քանի փայլուն երեւոյթներ բացառութիւն են կարծում միայն և չեն կարող իբրև ազգային յատկութեան արտայայտիչներ համարուել: Նաև այն փորձառութիւնները որ աւելի կրթութեամբ աղքերի հետ մղած պատերազմներում իրենք բերին, նրանց համար անցան առանց մի նշան անգամ թողնելու: Այդ է պատճառ որ ոչ առևտուր անող, ոչ երկրագործ և ոչ էլ անասնաբուծութիւնով զբաղվող մի ազգ դարձան: Այնչափ զօրութիւն չունեցան որ կարողանային իրանց ոչ թիւրքական, մասնաւոր որ թէ պալատը և թէ ժողովուրդը միմեկին թիւրքերը մի ան-

Այո՛, թիւրքիայի նման պետութիւնները հէնց այն պատճառով համարձակ կերպով արհամարհում են քաղաքակրթութեան և մարդասիրութեան պահանջները, որ եւրոպական պետութիւնների մէջ չը կայ համերաշխութիւն, որ պետութիւնների միջազգային շահերի մէջ կան մեծ հակասութիւններ, որոնց մէջ թիւրքիայի նման կառավարութիւնները հիմունքներ են որոնում իրանց անպատիւ բարբարոսութիւնների համար:

ԱՆՎԵՐՋ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայոց եկեղեցին ժողովրդական ազատ եկեղեցի է. նա հիմնված է ժողովրդականութեան սկզբունքի վրա. նա չէ ընդունում կաթօրիկ եկեղեցու դաւանած միապետական սկզբունքը», — ահա քարոզներ և բացառականութիւններ, որ մենք ամեն ժամ մտնակ լսում ենք հայ կղերից, հայ կղերական խաւարամիտ դասից:

Եւ այդ նրանք քարոզում են ամեն ժամանակ և ամեն տեղ՝ եկեղեցիների բեմերից, լրագրողների մէջ, բայց մասնաւոր այդ քրդաբերով նրանք պարծենում են օտարազգիների առաջ ամեն անգամ երբ պէտք է լինում բաղդաւակ հայոց եկեղեցին օտար եկեղեցիների հետ:

Սակայն, երբ դուք հետամուտ էք լինում անսնելու, թէ արդեօք իրականութեամբ գործողութիւնը մէջ գործադրվում են այդ սկզբունքները, որոնք քարոզվում են տեսականութեան մէջ՝ այդտեղ դուք հանդիպում էք անվերջ հակասութիւնների: Տեսարանը միանգամայն փոխվում է, ազատ ժողովրդական եկեղեցին բոլորովին ուրիշ գոյն, ուրիշ ուղղութիւն է ընդունում. այդ ազատ, ժողովրդական եկեղեցու պաշտօնային կղերը այնպիսի միապետական, հակա-ժողովրդական տէնդենցիաներ է արտայայտում, որոնցից խորշում է նոյն իսկ կաթօրիկ եկեղեցին:

Փաստեր՝ որքան կուզէք: Վերջիկայից հայ ժողովուրդը կատարում է օրինաւորապէս կաթօրիկոսական ընտրութիւն, ի՞նչ է անում կղերը, նա բողոքում է այդ ընտրութեան դէմ, ար-

դեքներ է յարուցանում, որ ժողովրդից օրինաւորապէս ընտրված կաթօրիկոս չը կարողանայ ստանձնել իր պաշտօնը, և այդպիսով օտարակոյս է անում մի ամբողջ երկրի ժողովրդի իրաւունքը:

Կամ մի տեղ ժողովուրդը կատարում է երեցիկականի, հոգաբարձութեան ընտրութիւն: Հոգեւոր իշխանութիւնը, որ թէ՛ օրէնքով, թէ՛ եկեղեցու սահմանադրութեամբ պարտաւոր է միայն հսկել, որ ընտրութիւնները կատարվեն օրինաւորապէս և թոյլ չը տալ սահմանված կանոնների խախտում, հետեւաբար, որ կարող է բեկանել եղած ընտրութիւնների կամ չը հաստատել միայն այն դէպքերում, երբ ընտրութիւնները օրինաւորապէս չեն կատարված՝ մերժում է հաստատել այդ ընտրութիւնները առանց որ և է բացառութեան, առանց որ և է պատճառաբանութեան, պարզապէս քմահաճից բանեցնելով:

Այդպիսի օրինակներ հարկաւորներով պատահել են և պատահում են թիւրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի հայ եկեղեցական-վարչական կազմութեան մէջ: Գուրս է դալիս ուրեմն, որ քարոզվում է մի սկզբունք, իսկ կեանքի մէջ գործադրվում է բոլորովին հակառակ սկզբունք:

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրողը, որն նոյնպէս խօսում է հայոց եկեղեցու կեանքի մէջ արտայայտված այդ հակասութիւնները՝ մտնելով շատ անգամ փոքրիկ նկատում է հետևեալը:

«Ժողովրդական ազատ եկեղեցի մը պէտք է միշտ նախաձեռնողը ըլլայ իր ամէն մէկ անհատին իրաւունքները ապահովելու պայտապանութեամբ իր հաւատքին հիւր խախտելու պէտք է միշտ ընդունակ ըլլայ յառաջդիմելու, բարեփոխուելու: Խալ երբ այդ եկեղեցին ամէն նոր առաջարկի դէմ է ոչ կարեւորը կարծալէ, երբ իր վարչական ձեռնահասութեամբ ներկայացած կենսական խնդիրներու համար առանց արդարութիւնը, իրաւունքը փնտրելու միայն և միմիայն մէկ պատասխան մը ունի, ոչ կարեւոր, երբ ձեռքէն եկած ամէն միջոց կը գործադրէ որպէս զի իր անդամները ու ի կերպով չմտածեն ու կարծիք չստանան չկրօնական-եկեղեցական կոչուած խնդիրներու վրայ, և ոչ իսկ կարեւոր պաշտպանի իրենց դատը՝ այն ասան ինչ տարբերութիւն կը գտնենք ազատ-ժողովրդական և ուրիշ եկեղեցիներու միջեւ»:

տալ ուժեղ ցեղ մնացին: Գտնէ արանց առաջադիմութիւնը բաղդաւակով այն առաջադիմութեան հետ որ քրիստոնէական են արեւ 18 և 19-րդ դարերում, չնայելով անդադար ճնշումներին՝ խիստ անշնչան կը գտնենք: Սա էլ պէտք է ասել, որ թիւրքերը միշտ պաշտպանողական պատերազմներ մղելով՝ ժամանակ և միջոց չունեցան, բայց պատերազմական արհեստից, մի ուրիշ բանով ևս զբաղվելու: Բայց այս հանգամանքները առաւել ևս լայնացրին քրիստոնէականի և թիւրքերի մէջ եղած վիճը:

Քրիստոնէականները, որ ղինուորական պաշտօնից զրկված էին, ճնշումներ տալ իրանց գոյութեան համար կռվելով՝ սովորեցին ճարպիկութիւն և խարդախութիւն, իրանց ձեռքն ստին առևտուրը, երկրագործութիւնը և անասնապահութիւնը, արտասահմանից եկած փողով և միաօխոնների միջոցով ամեն տեղ գոյութեան չինեցին, ուր թէն քիչ, բայց առաւել ոգտակար բաներ սովորեցին քան թէ մասնագիտականները, որոնց զարդանքները զուրանի լոկ ընթերցանութիւնը գլխաւոր և առաջին բանն է, և դնալով տարեց տարի գործնում էին թիւրքի դէմ: Իրանց զբաղական և հողային հարստութիւնը, չը նայելով հարկերի ծանրաբեռնութեան, միշտ աճելով այնտեղ հասաւ, որ այսօր թիւրքը ծանր մտաւորութեան մէջ է ընկած, բոլորէն առ այդ գործը թիւրքին համար օր քան օրէ աւելի վտանգաւոր է դառնում, և որովհետեւ

Պարզ է, որ ազատ ժողովրդական եկեղեցին նա՛մ միայն կարող է համարվել, որն խիստ կերպով պահպանում է ժողովրդականության իրեն, որն յարգում է ժողովրդի ձայնը և կամքը, ոտնակոխ չէ առաջին հերթին իրաւունքները, որ եկեղեցին տալիս է նրան թէ՛ ընտրողական, թէ՛ վարչական և թէ՛ այն բոլոր ասպարէզներում, որոնք ենթարկվում են եկեղեցու ազդեցութեան:

Տեսական, վերացական կեանքի մէջ հայոց եկեղեցին մի ազատ ժողովրդական հաստատութիւն է, իսկ իրական, գործնական կեանքի մէջ այդ ազատ ժողովրդականութեան սկզբունքը հանդիսանում է միայն մի ֆիկցիա:

ՀԱՅՈՅ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

I

Իօնօնից «Нов. Обозр.» թղթակիցը գրում է հետեւելով.

«Soleil» լրագրի թղթակիցը իր Ռուսաստանից գրած նամակի մէջ հաղորդում է իբրեւ հաստատ լուր, թէ սուլթանի մի շարք մերժումները ընթացիկ մտցնելու մասին, նորից դարձրել են Ռուսաստանի աչքը փոքր-Ասիայի վրա, թէ հայոց հարցը վերջի վերջոյ պէտք է չարաբանտրիկ հետախնդրելու ունենայ թիւրք կառավարութեան համար և որ եթէ դրեւորը Հայաստանում բարդվեն, այն ժամանակ Ռուսաստանը, ի հարկէ, կը գործադրի manu militari զիջումատրական եւրոպայի վէրը փոքր-Ասիայում կատարելու համար:

II

«Новости» լրագրին գրում են Կ. Պոլսից հետեւելով.

«Սայիդ-փաշան նշանակել է մի նոր յանձնաժողով, որի անդամներն են՝ արտաքին գործերի մինիստր Թուրքիան-փաշա, ներքին գործերի մինիստր Խալիլ-փաշա-փաշա, ֆինանսների մինիստր Նալիլ-փաշա և մեծ-վիզիրի քարտուղար Թէֆիկ-փաշա: Այդ յանձնաժողովին յանձնարարված է մշակել ընթացիկների մի նոր ծրագիր, որն կարելի լինի ներկայացնելու մեծ պետութիւններին նրանց առաջարկած փոքրիկ փոխաբէն:

«Բ. Դրան մէջ միտք է ծագել ուղարկել Հնոս մի գեաւանութիւն, խնդրելու պատկը որ սա բարեկամաբար ներդրծէ այն մեծ պետութիւնների կարելիաների վրա, որոնք նշանակում են ընթացիկների մոցնել փոքր-Ասիայում: Այդ արտա-կարգ գեաւանութիւնն պաշտօնը կը յանձնվի Խալիլ-բէյին, արարողապետի օգնականին, որ ներ-կայացնում է սուլթանին օտարազգի զիջումատրական աղէտներին: Խալիլ-բէյն ոչ ֆրանսերէն գիտէ, ոչ իտալերէն: Կասկածելի է, որ նա կարողանայ որ և է արդիւնք ձեռք բերել, որովհետեւ վատի-կանը վարդա խորհուրդ է տուել Բ. Դրան Հա-

թիւրքիայի իսլամ ժողովուրդը կարողութիւն չու-նի բարձր կրթութեան մէջ քրիստոնեաների հետ հաւասար քայլ անել և դրա փոխարէն էլ չունի, ուրեմն հետեւեալն էլ այն է, որ թիւրքի հարստութիւնը, գորութիւնը և թիւր միշտ պա-կասում է: Թիւրքերի անընդհատ գաղթելը ի-րանց նախնի երկիրներէն՝ Յունաստանից, Հեր-ցոգովինայից, Բոսնիայից, Սերբիայից և Բուլ-ղիայից, ամենապարզ փաստ է, որ մասնազան-ները միայն այնտեղ են կարող գոյութիւն ունե-նալ, որտեղ նրանք արածնալ զիրք են բռնում, բայց համահաւասար հանգամանքներում քրիստո-նեաների հետ մրցել անկարող են:

Այսպէս սակաւ-տակաւ, բայց հաստատապէս փոխվում է քրիստոնեաների յարաբերութիւնը դէպի թիւրքերը—սա մի շատ նշանաւոր երևոյթ է այդ պետութեան մէջ: Յիբաւի կուրացած թիւրքերը մի քանի անգամ փորձել են քրիստոնեաների աճումը ջարդով կանգնեց-նել, բայց ինչպէ՛ 1860 թվին Սերբիայում տեղի ունեցած կոտորածը առիթ տուաւ Եւրոպային միջամտել այնպիսի աճով, որ Սերբիայի քրիս-տոնեաների համար կատարեալ օրհնութիւն է: Թիւրքերն այդ երկիրը առաջին անգամ գրաւե-լուց յետոյ մինչև այժմ Սերբիայի քրիստոնեանե-րը այնպիսի հարստութիւն չեն ունեցել ինչպէս հիմա: Դրա փաստը այն զեխութիւնն է, որ արիստ, մտել է արանց մէջ: Հայաստանում էլ նոյն հետեւեալները կը լինեն: Թիւրքերի և քրիս-

տոնեաների մոցնել, չը սպասելով մեծ պետութիւնների ստիպմանը:

Ուրեմն սուլթանը, իսլամի մեծ խալիֆան, պատրաստ է նոյն իսկ աղբիւսներով զիջել քրիս-տոնեաներին պետին և ստորացնել մահիլը խա-լի առաջ միայն նրա համար, որ չը մոցնի Հա-յաստանում ընթացիկները:

III

Անգլիական «Daily News» լրագրի * Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ հայոց հարցի վերաբերմամբ բանակցութիւնների ընթացքը մեծ կախում ունի անգլիական պարլամենտական ընտրութիւններից: Թիւրքերը յոյս ունեն, որ Սոլուրիի յաղթութիւնը կը թուլացնի եւրոպա-կան պահանջների ստորիմանը: Անգլիական դես-պան Ֆելիքս Կերրիի վարկը շատ բարձրացել է Կ. Պոլսում:

Սակայն Թիւրքիայում իրերի վիճակը շատ վատնաւոր է: Բազմաթիւ թիւրքերի կաւա-նաւորութիւնները սարացայ է, որ թիւրք ազգաբնակչութեան մէջ ևս շատ մեծ է անբաւա-կանութիւնը և որ երկրի բոլոր մասերը և խա-ւերը կարօտ են հիմնաւոր բարեփոխութեան: Հայկական ընթացիկների անհրաժեշտութիւնը օրէց օր աւելի են դգալի է դառնում: Թիւրքիայի այն չըջանները, որոնք մինչև այժմ լուռ էին՝ արա-մաղիք են բողբոյն ձայն յարուցանել:

IV

«Բէյութէր» գործակալութեան հետադրում են Կ. Պոլսից, որ չորսնիւ անգլիական դեսպան Կերրիի Բ. Դուրը հրաման ուղարկեց Մուշի միւթէսարի-ֆին, որ ստանդիններին գումարներ բաժանող կոմիտէաներին տրվեն ամենամեծ օգնութիւններ նրանց գործունէութեան համար և հարկաւոր դէպքում պահապան ոտիկաններ նշանակվեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ ՍԱՀՄԱՆԻ ՄԻՒՍ ԿՈՂՄԻՅ

Սահմանի միւս կողմից հետզհետէ մեղ հա-նող նորանոր և քառանկիւ լուրերը դալիս են կրկին հաստատելու մեր անցեալ անգամ հաղոր-դածը, որ հայկական հարցի առիթով ծագած մոյի ֆանատիկոսութիւնը մասնաւորապէս մէջ գնալով աւելի և աւելի մեծ ծաւալ է ընդու-նում, որ Զաքի և Թահսին փաշաներն իրանց յաջորդները թողել են Հայաստանի իւրաքան-չիւր անկիւնում, որ սրանց ձեռքից հայ ժողո-վուրդն այլ ևս հանգիստ չունի: Ներկայումս քիւրդ մասնաւորապէս ատուութիւնն այնքան է զօրացել դէպի ֆլայ «բայան», որ նա, քիւրդը, այլ ևս ոչ մի առիթ չի փախցնում արտապայտե-լու այդ ատուութիւնը և ոչ մի միջոց չի խնա-յում իր վրէժխնդրութիւնն էլ աւելի ստակալի, էլ աւելի դժոխային, ճիւղապան խաղերով ար-տապայտելու Յայանի է, որ քիւրդը օտարներին,

տոնեաների մէջ եղած վիճ. քանի գնում լայնա-նում է, խաչը բարձրացնում է, մահի կը ցածանում:

Այս այն վիճակը, որով բայցատրվում են Թիւր-քիայում տեղի ունեցող անցքերը: Եթէ թիւրք կառավարիչները պարզ տեսնէին և ընդունակ լի-նէին պետութեան վիճակը հասկանալու, պիտի հաշտուէին անխուսափելու հետ ու փորձէին մահ-մեղական և քրիստոնեական ժողովուրդները մո-տեցնելու քան թէ հակառակ կերպով գործելու: Ինչպէս որ Հայաստանի դէպքերը ցայց են տա-լիս Հարկան, Թիւրքիան կը դադարէր այն ժա-մանակ իսլամական պետութիւն լինելուց, և կա-մայ կամայ կը դառնար քրիստոնեայ երկիր, բայց դրանով նա նորանոր հիւսիքը կատարար և նոր կը ծաղկէր: Իսկ որովհետեւ մի այդպիսի հակա-ցողութիւն թիւրք պետերից անսպասելի է՝ ու-րեմն արեւելեան խնդիրն էլ բաւական ժամանակ կնայ իբրեւ մի ծանր վտանգ Եւրոպայի համար: Թիւրքիայի վերջին հաշիւը տեսնելիս քաղաքա-կան հաւասարակշռութիւնը խաղաղ կերպով կը կատարվի թէ արեւան դետերով, այդ ոչ ոք չէ կարող դուշակել:

Որովհետեւ Թիւրքիան իր ներքին վիճակի պատ-ճառով անկարող է յարձակողական քաղաքական-նութեան հետեւել, ուրեմն մնում է միայն նրա ինքնապաշտպանութեան ոյժը ճանաչել և հաշու-առնել: Եւ նրա այդ ինքնապաշտպանութեան ոյ-ժը մեծ նշանակութիւն ունի ինչպէս Անգլիայի

նոյն իսկ իր թշնամիների հետ ունեցած յարա-բերութիւնների վերաբերմամբ ունի իր աշխա-թի սրբազան աւանդութիւնները, իր նուիրա-կան օրէնքները, հիւրասիրութեան, իզիթութեան մասին իր որոշ ցեղական կարգերը: Այսպէս՝ իւրաքանչիւր քիւրդի, նոյն իսկ քիւրդ աւազակի յարկի տակ մանողը, թէկուզ նա լինէր տանտի-րով արկանաբար թշնամին, արեւան վրէժխնդ-րութեան ակտեանը, այնու ամենայնիւ գտնում է հանգիստ և ապահովութիւն, որովհետեւ այդ-պէս են պահանջում աշխարհի սրբազան աւան-դութիւնները, ցեղական կարգերը և «իզիթու-թիւնը», բայց հայն այժմ այնքան ստուելի է դարձել քիւրդին, որա՛ վրէժխնդրութեան զգաց-մունքն այնպիսի հրէշաւոր չափեր է ընդունել դէպի հայը, որ նա՛ քիւրդը, հարկ եղած դէպ-քում ոտի տակ է տալիս աշխարհի սրբազան օրէնքները, սրհամարհում է իրան համար սուրբ աւանդութիւնները և հիւրասիրութեան կանոն-ները, երբ խնդիր հային է վերաբերում, երբ առիթ կայ վիրաւորել հայի ընտանեկան սու-տիւր, խաղաղ նրա գլխին այնպիսի խաղեր, ո-րանցից դժուրքն անգամ կը սարսափէր:

Այսպէս սրանից մի քանի օր առաջ երկու հայ ընտանիքներ թողնում են իրանց բնակա-վայր—Վարաքլիսան և իրանց ամուսնիների և աղջիկների պատիւը փրկելու, ընտանիքը սովից ազատելու համար դիմում են դէպի Ռուսաստա-նի սահմանները, նման այն հաղարաւորներին, որոնք այժմ թախաւում են Կովկասի իւրաքան-չիւր հայաբնակ անկիւնում: Նրանք համում են Մեր-Վեաղար կոչված քրդական եայլալը սահ-մանին մօտ կաղզուանի կողմերից: Այս եայլալը պատկանում է Ալի-փաշային, որը վերջին ուսու-տանկական պատերազմի ժամանակ դաւաճանից ուսուց լանակին և անցու տանկայ կողմը, (այս Ալիքը ուսուց յայտնի գեներալ քիւրդ ձափար աղայի որդին է): Յիշեալ եայլալում ի-րանց ամբողջ օրացով վրաններում բնակված են լինում Ալի-փաշայի որդին Ռասուլա բէգը և Ռուսաստանից փախած մի այլ քիւրդ՝ ֆեարիմ բէգը:

Այս այս գաղանների որդուն են ընկ-նում երկու դժբաղդ հայ ընտանիքները: Քիւր-դերը հրաւիրում են հայերին իջնանի իրանց օրացում, հիւր լինել, մի գիշեր հանգստանալ և միւս օրը ճանապարհ ընկնել աւելով—«Մենք այսուհետեւ ձեր ծառաներն ենք», ձեր խոնարհ ապաները, դուք պէտք է երկրի տէրը լինէք և մեզանից միմիայն բարեկամութիւն և հպատա-կութիւն պիտի տեսնէք այսուհետեւ: Խեղճ հա-յերը թէն երկիւղով և կասկածով, բայց և այն-պէս ճարձատուած իջնում են: Քիւրդերը նրանց տեղաւորում են, հիւրասիրում են: Վրա է հա-նում գիշերը, և ահա անպաշտպան հայերի մօտ յայտնվում են օրայի երկու աղաները, Ռասուլա և ֆեարիմ բէգերը սրահանելով՝ որ հայերը ան-միջապէս յանձնեն նրանց իրանց կանանց և աղ-

նոյնպէս երեք պետութեան դաշնակցութեան համար, նա արեւելեան եւրոպայում քաղաքական հաւասարակշռութիւնը պահող մի նշանաւոր տարր է: Թիւրքիային տկարացնող տկարացնում է և այն երեք պետութիւններին, բայց Թիւրքիայի զորանալը զօրացնում է, ոյժ է տալիս և նրանց: Զօրեղ Թիւրքիան մի նշանաւոր գործիչ է բոլոր եւրոպական քաղաքականութեան մէջ: Բայց Թիւր-քիան զօրացնել կարելի է միմիայն հեռացնելով նրա միջին ներքին վրդովմունքները: Քրիստո-նէական ժողովուրդը զօրացնել մասնազանաւո-թեան դէմ, առանց թոյլ տալու որ առաջինը երկրի պահպանութեան մէջ մաս ունենայ՝ դա՛ Թիւրքիայի կործանումը կնշանակէ, որովհետեւ քրիստոնեայ տարրերը միմիայնով միմեանց հետ՝ առաջ կը բերեն նրա կործանումը: Իսկ քրիս-տոնեաներին այսուհետեւ էլ հեռու պահել վար-չական պաշտօններից և նրանց թողնել թիւրքե-րին իբրեւ մերթելու մասցու՝ դա մի յիմարու-թիւն է գժութեան չափ: Թիւրքիայի վարչական անձանց ստիպել որ քրիստոնեայ և մահմեդա-կան ազգաբնակչութիւնները իրար մօտեցնեն և մի օրինաւոր վարչութիւն մոցնեն—ահա ինչ պէտք է լինի յիշեալ չորս պետութիւնների Ռսկեդ-ջիւրի արեւում ունենալիք քաղաքականութեան գլխաւոր նպատակը:

Արդի քաղաքակրթութեան հիմքն է պետու-թեան ամեն բնակիչների հաւասար իրաւունքնե-րը առանց խտրութեան լեզուի և կրօնի: Թիւր-

ջիկներին, հայերը մեղքում են յիշեցնելով՝ նը-րանց, որ իրանք զոհաբեր են, նրանց յարկի տակն են զանվում, ուրեմն և պէտք է վայելեն հիւրին յատուկ բոլոր արտօնութիւնները և ոչ թէ անողատիւ լինեն: Սակայն ի դուր, քրդի հա-մար այլ ևս սրբութիւն չը կայ հայի վերաբեր-մամբ, և ահա այս գաղանները հրամայում են կատուել ազամարդկանց և նրանց աչքի առաջ բռնաբարում են մէկիկ-մէկիկ նախ կանանց և այն՝ երեխաների ներկայութեամբ և ապա եր-կու կոյս աղջիկներին, դարձեալ ամբողջ ընտու-նիքի աչքի առաջ և աղիտղորմ ճիշերի և յուսա-հատական արցունքների մէջ: Այսպիսով գաղա-նացած բէգերը յազուրդ են տալիս իրանց դա-զանային կրքերին, բայց հայ կնոջ, հայի կոյս աղջկայ պատուի հրէշաւոր բռնաբարումով տա-կաւին չեն կարողանում զոհացումն տալ իրանց վրէժխնդրութեան կրքին, և ահա կատարել են տալիս մի այլ դաղերի գործ, որին անհարկն են յարմարաւոր անձական տալ. դժոխային ասեղը, դիւական, զազանային, սակայն այս բառերից և ոչ մէկը չեն կարող արտայայտել այդ զարհու-րելի գործողութեան բոլոր սարսափը: Բէգերը կանչում են ամբողջ օրայի քուրդերին և հրա-մայում են կրկին բռնաբարել անպաշտպան կա-նանց և աղջիկներին: Որայի բոլոր քիւրդերը կատարում են այդ զարհուրելի գործողութիւնը դժբաղդ թոյլ էակներին վրա, և երբ աղամարդիկ-ներին արձակում են և աղաւթ թողնում, այն ժամանակ նրանց յանձնվում են միմիայն իրանց կանանց և աղջիկների արհուրաց կիսակնքան դիակները: Գժաղդներն անհարկն գտնելով այլ ևս չարժանակել իրանց ճանապարհը՝ կապում են դիակներն իրանց գրաստների վրա և երբ ար տատվելով ստորապատում են վերադառնալ կըր-կին Վարաքլիսայ, այն ժամանակ բէգերը նը-րանց կրկին բռնում կապել են տալիս և որպէս փախտականներին՝ ուղարկում են զայմադաւլին յանձնելու: ճանապարհին կանանցից մէկը արիւ-նաբաւ լինելով մեռնում է, միւսները համում են Վարաքլիսայ և մեռածի դիակը ներկայաց-նելով դատ են պահանջում, երբ զոհացումն չեն ստանում՝ դիմում են Երզրումի վալիին, և այդ բոլոր ժամանակ ստանաւ ինչու՛ զեհե՛ր ֆուտ է անկողայ:

Այնաստեղ գործն այս վիճակի մէջ է թողել հետացել, իսկ թէ ինչով կը վերջանայ այդ, մարգարէ չը պէտք է լինել գուշակելու համար, երեւի վերջի վերջոյ հայերը կը բան-տարկուին որպէս «Ֆէսաղ» կոմիտայիներ, ո-րոնք իբր թէ գնում էին արտասահման զէնք բերելու...

Ա. ԱՄԱՐՆԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՄԻՆԻՍԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԳՐԱԲԵՐԱԿԱՆԸ

Պետական կալուածների մինիստրութիւնը, բարձրագոյն հանաւորութեամբ, այս օրերս հրա-

ւրան կամ պէտք է այս սկզբունքն ընդունէ, կամ իր մահաւան դատով ինչու: Եթէ նա այսու-հետեւ էլ մերժէ հաւասար իրաւունքներ քրիստո-նեաների համար, դրանով նա աւելի ևս կը սրէ տա-րկները ի վեր քրիստոնեաների և մասնազանա-նիւրի մէջ եղած թշնամական յարաբերութիւնը, և վիճակն էլ ուրեմն աւելի և աւելի վատնա-ւոր կը դառնայ: Կամ այն է որ մի ներքին մեծ պատերազմ տեղի կունենայ, և այն ժամանակ բո-լոր քաղաքակրթ ազգերի կարեկցութիւնը և վառ սէրը քրիստոնեաների կողմը կը լինի կամ քրիս-տոնեաները կապաւորվեն բոլոր Թիւրքիայում հէնց այն առաջին պատերազմի ժամանակ, որ օսմանեան պետութիւնը մի արտաքին ազգի հետ կունենայ: Վառելանիթ կայ ամեն տեղ—Արի-տայում, Մակեդոնիայում, Ալբանիայում, Սերբիա-յում, Հայաստանում: Երկու դէպքն էլ կործանիչ են Թիւրքիայի համար: Հէնց որ մի ներքին պա-տերազմ պատահեց՝ քրիստոնեաների և մահմե-դականների մէջ՝ իսկոյն կը յայտնվի քրիստո-նեայ քրիստոնեաների միջամտութիւնը, ինչպէս որ Յունաստանի և Սերբիայի օրինակները ցայց են տալիս: Բայց թէ մի արտաքին տեղութեան մի-ջամտութիւնը այժմեան հանգամանքներում ինչ է նշանակում և ինչ հետեւեալ կունենայ, նոյնչափ թիւ կասկածելի է որքան մի պատերազմ, որ մի պետութիւն հիմա սկսէ Թիւրքիայի հետ: Թէ այն թէ այս պէտք է Թիւրքիային բաժին բաժին անէ:

(Կը շարունակվի)

պահանջեց 65 թուական, և մինչդեռ պատրաստ-
վում էին այդ գումարը վճարելով՝ աղատել,
կատարելով իր քաղաքականությունը ձեռ-
քից չը թողնել: Յուզված ամբողջին հանգաման-
քներու նպատակով, նախ լուս փայտ խիւղ տվեց
ամբաստանեալին, որից յետոյ լուր տարածեց՝ թէ
«Թագաւորը նորան պահանջել է Թէհրան պիտի
տանեն», և արդարեւ նրան պատել ձիով հետաց-
րին քաղաքից, թէ ուր, այդ իրանը գիտեն,
միայն այսօր լսեցի, որ գիշերը ծածուկ վերա-
դարձրել են իր տունը. թէ որչափ ճշմարիտ է
այդ չը գիտեմ: Ի դէպ է առեւ և այն, որ երբ
յուզված ամբողջին և նահանգապետի ու հոգևորա-
կանների մէջ տեղի է ունենում խօսակցութիւն
և տարբեր մտքեր՝ նահանգապետը ուղղում է ի-
մանալ և հայերի կարծիքը այդ ամբաստանեալի
վերաբերմամբ, ուստի կանչում է իր մօտ մի
պարսկազգեստ և պարսկահոգի հայ համարված
մի մեծապիւն և հաստատօր խանի և նրանից
հարցնում այդ մասին, որը ոչ միայն նրան է
համարում մահու արժանի, այլ և նախապէս չէ
կարողում ամենալուս հային անգամ: Անցեց այդ
խանը, արժանի է գովասանութեան: Պէտք է
ասել և այն, որ պարսիկ կինը, որ մեզապից էր
համարվում, որտեղ պայթիւնից մեռնում է այն
ժամանակ, երբ, ինչպէս պատմում են, տուրքա-
կի մէջ են կամենում գցել և թակել: Սարսափը
առ. այժմ անցած կարելի է համարել:

Այնչափ ամիս 26-ից 27-ի գիշերը ժամի 2-ին,
երկրաշարժի մի հարուած պատահեց, որը տեղի
մի քանի վայրկեան. հարուածը այնքան զգալի
էր, որ շատերը քնից զարթել զուր քնի վաղէկ,
և պատից կախած լապտերը վայր էր ընկել. սա-
կայն մի զգալի վտանգ չը պատահեց:

Գ.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՐՈՒԿԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 12-ին: Լրագիրների ա-
սիւնով, եկող չարախ Պարիզում կը ստորագրովի
ամերիկական դործարանատէրերի և եղբ. Նորելի
ընկերութեան մէջ մի պայմանագիր, որի զօրու-
թեամբ կէրօսին փաճառումը Միջերկրական ծո-
ղի նաւահանգիստներում, Շվեյցարիա և Նորվե-
գիայում թողնելով է բացարձակապէս ուսուց
գործարանատէրներին, Նորելի ընկերութեան ղե-
կավարութեամբ. իսկ ուսուցական կէրօսին ար-
տահանութիւնը մնացեալ կէրօսալում սահմանա-

Վարարողի հայոց հոգեւոր թեմական դպրանոցի համար հարկաւոր է մի հա-
մալսարանաւարտ ուսուցիչ ուսուցիչ լեզուի և ուսուցիչ պատմութեան, որ պի-
տի ունենայ շաբաթը 26 դաս և տարին 1200 ռ. առձին. մի ուսուցիչ ուսուցիչ լե-
զուի (15 դաս), զծագրութեան և նկարչութեան (13 դաս), պետական միջ-
նակարգ դպրոց տաւարած, որ պիտի ունենայ շաբաթը 28 դաս և տարին 700 ռ.
առձին, և մի ուսուցիչ երգչեղութեան և ձայնագրութեան, որ պիտի ունե-
նայ շաբաթը 21 դաս և տարին 600 ռ. առձին:
Խնդիրները հանդերձ վկայադրելով պէտք է ուղարկել այս հասցեով. Шуша,
Инспектору армянской духовной семинарии. (№ 79) 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Առևտրողները ստանում են առաքելական տարե-
կան գումարը 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտ-
րական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուաբանութիւն համընթաց վրա, 5) Առևտրական թղթանկութիւն, 6)
Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն, վատ ձեռքի
ուղղելը:

Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երկուշաբթի 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոլաթիում, Ալեքսանդր ֆրիդմանովի
տանը, № 9, Սերգիևիական և Նազարեան փողոցների անկիւնում: Ծրագիրը և
կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս կըր. Ծովանովների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Օտարաբաղադրացիք զմեռում
են՝ Тифлисть, С. П. Мануэляну.

(Կ. շ.) № 62 4—25

փակվում է գործածութեան 35%՝ իսկ 65%՝
թողնում է ամերիկական կէրօսին բաժին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 13-ին: Պետերբուրգում
տեղի ունեցած նորածին իշխանուհի իրենա Ա-
լեքսանդրովնայի մկրտութիւնը: Իրենա կնքանայր
և կնքամայր ներկայ էին Թագաւոր Կայսրը, Կայս-
րուհի Մարիա Ֆեդորովնա, յունաց թագուհին և
մեծ իշխաններ Միխայէլ և Վէրդի Միխայլո-
վիչ:

ԲԵՐԼԻՆ, յուլիսի 13-ին «Nat. Zeitung» հա-
զարդում է, որ Ստամբուլի թագման առիթով
տեղի ունեցած շփոթութիւնների ժամանակ, թա-
գօրին մասնակցող Վերմանիայի ներկայացուցիչը
չենթարկվեց որ և է անսխառնութեան:

ՀՈՒՍՏ, Արեւմտեալ զէնը մայրերը արդէ-
լած լինելով, անգլիացիները բռնեցին 20,000
հրացան, որ կամենում էին անցկացնել Արեւի-
նիւս:

ԼՈՆԴՈՆ, յուլիսի 13-ին: «Stand.»-ին հաղոր-
դում են Վ. Պոլսից, «Լուսերնի» նախկին միւնիստր-
ների խորհուրդը վճռել է զէնքի կանչել թիւր-
քաց զօրքի պահեստը բոլոր սահմանակից շրջան-
ներում և եւրօպական վիլայէտներում:

ՇԱՆՔԱՅ, յուլիսի 13-ին: Եւսթանիան կառա-
վարութիւնը պահանջում է, որ Չինաստանը լիա-
թեպ թերակղզին յետ տալու փոխարէն որոշ-
ված գնաւորական սուղանքի գումարը աւելացնի
7 1/2 միլիոն տալէրով:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՏԱՆԻ ԲԱՍՏԱՆԻ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍՏԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Ս. ԳՐՈՐԺՆՈՎ (Եւրօպայից)

Գլխաւոր փող. Սարաջեֆի նոր տուն,
բ ա կ ու մ:
Է. Ս. Ա. Գ. Ն. Ո. Վ.

Բազուի տնտեսաւարից յետոյ մնացած ապ-
րանքը, որ բաղկացած է իսկական Եւ-
րօպայիւնան ձեռագործ քաղցանից՝ շապիկ-
ների, փոխանների, չաքաւների համար և
այլն ամեն գնորդ: Կայ մեծ ընտրութիւն
սեղանի սպիտակեղէնի, պիկէից կարված
վերմանիների, թաւեղացի գորգերի, սփռոցների
և այլ քաղցանեղէն և չիւղէն սպրանք-
ների:

Առևտուրը կը լինի կարական գնով և կարծ
(№ 79) Ժամանակով 2—3

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տ հ օ ա յ ի է բ ւ ա դ ի. Ա լ է ք ս ա ն դ ր օ Վ ա կ ա յ ա լ ի ն ի ա, № 107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՔՍԷ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Սարգս և Տաղիաւոր մախմուր, պիւլը, լինա-գոտիկ, ճախատանոց, գլխի աղ-
լուխ, բարձի երես, պիւլըի գորգ, և այլն:

ՊԱՆԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Գանձակայա, № 31, Յ. Գ. Մարգարեանի մօտ:
(№ 79) 1—10

ԿԵՕԼԵՐԻ ԿԱՈՒՉԻԿԵՆԵՐԿ

ՃԱՀՃԱՅԻՆ ԿՕՇԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ճախվում է ԱՄԵՆ ՏԵՂ բոլոր նշանաւոր առևտրականների մօտ:
Տալիս է անպայման անվտանգութիւն. շատ կակղացնում է և պահպանում է կաշին. անա-
խարժ հոտ չունի: Այդ բոլոր արժանատիութիւնների հետ միասին այդ ներկը անհամեմատ աւե-
լի աման է իրան նման միւս արտադրութիւններից:
(№ 80) 1—2

Գ Ե Պ Ք Ո Վ

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒ ՏՈՒՆ, իրանց բոլոր յարմարութիւններով, առան-
ձին բազմութիւն և պարտեզով, քաղաքի կենտրոնում, նախկին պրիկապի պարտեզով, շատ
ձեռնառու պայմաններով:

Հասցէն իմանալ Ստանիսլավ Չարախիւնայի մագաղանում, Գլխաւոր փող. Սարաջեֆի
(№ 79) 2—3

ԳՈՒԹԱՅԻՍԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԿԻՐ

որը արտասովոր սպիտակութիւն ունի և մեծ ամրութիւն ու խնայողութիւն է տալիս
շինութիւններին, ծախվում է վազմանքով Թիֆլիսի երկաթուղու կայարանում, պուլը
19 կօպէկով:

Գիմը ինժեներ Լեւալ Գիւնիսիւն. Բօլշայա Վօրօլօնայա, տ. № 24, տուն Լա-
սեֆի: (Շ. № 50) 10—10

ՕԺԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԿԻՐՈՒԹԻՒՆ

Ա Ղ Ձ Կ Ե Ր Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀՆԱՍԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՆ Է 23,000,000 ՐՈՒՐԼԻ:
Ընկերութեան առկութեան թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք
ցանկանում են ապահովանալ աղջկանց ապագան, «ՐՕՍՍԻԱ» ընկերու-
թիւնը առաջարկում է ՕժիՏԻ (բաժինը) ԱՊԱՀՈՎԱԿԻՐՈՒԹԻՒՆ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապա-
հովանել 5000 ՐՈՒՐԼԻ ՕժիՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ
այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Րօսսիա»
ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամից յետոյ 52 ՐՈՒՐԼԻ:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաեւ այն
պայմանով որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր
վճարած տուրքերը (պէսիւնները), եթէ միայն ապահովագրված երե-
կան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թւի յունիսի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապա-
հովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ՐՈՒՐԼԻ դրամագլխով:

Տղայ երեխաների համար եւս կարելի է ապահովացնել դրա-
մազուրկ նոյն կերպով ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը
ստացվի իրեն թողակ (պէսիւն) ԿՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար,
եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժա-
մանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում
են և ամեն տեսակ անգլիկութիւններ հաղորդվում են վարչութեանը
Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37),
Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնու-
վում է՝

ԹիֆլիսՈՒՄ, Սերգիևիական փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և
բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:
(№ 71) (Շ.) 3—52